

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կերակի, յուլիսի 30-ին, Բորժոմի հայոց եկեղեցում տեղի է ունենալու հոգեհանգիստ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆԻ

յիշատակին, որի մասին յայտնվում է ի տեղեկութիւն նրա յարգողներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական ինքնագործութեան հիմնական պայման.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ Ծուշուգ. Նամակ Գանձակից. Նամակ Սղնախից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործերը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ-ՆԵՐ.—ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ

Ներօպական մրցութիւնը աչքից չէ թողնում Պարսկաստանը: Պետութիւններից իւրաքանչիւրը աշխատում է, որքան կարելի է, աւելի արտօնութիւններ ձեռք ձգել այդ երկրում: Ամենից շատ բնականաբար հետաքրքրված են երկու պետութիւններ՝ Ռուսաստանը և Անգլիան, իրեն Պարսկաստանին սահմանակից պետութիւններ: Ռուսաստանը նկատելի կերպով ազդեցութիւն է ձեռք բերել Պարսկաստանի ամբողջ հիւսիսում, իսկ Անգլիան արեւելքում և հարաւ-արեւմուտքում: Պարսից Ծոցի ծովափում: Ռուսաստանը մտադիր է շուտով երկաթուղի շինել դէպի Պարսկաստան և ամենասերտ առևտրական և արդիւնագործական յարաբերութիւնների մէջ մտնել այդ երկրի հետ: Անգլիայի ներքին անվտանգ աշխատում են իրանց ապրանքները հեծան գետնով մտնել երկրի մէջ և իրապէս իրանց ազդեցութեան ենթարկել ամբողջ վաճառանոցը: Հաստատվում են բանկեր, առևտրական տներ և կանոնաւոր հաղորդակցութիւն Ներօպայի հետ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս անկերպարան դրութեան մէջ երբեք ժողովրդի սիրտը մտած հ. կրեմս Գալանտը այնքան խելոք չէր, որ չը կարողանար հասկանալ թէ որքան հեշտ է հայ փառամու հոգեւորականներին կապողներով և ճարտիկութիւններով որսալը: Եւ նա մտնում է պարտիաբարան, փոխելով իր զգեստը և հագնելով հայ հոգեւորականի զգեստ, քարոզութիւններ է աւելում և կարծ միջոցում գրաւում է շատերին: «Տիրոջ հոգեւոր» առատութիւն է խոստանում, և Գալանտը արդէն իր փրկած հոգիների հաշի մէջ գրում է նաև պարտիաբար Կիրակոսին և այս առիթով նոյն իսկ շնորհաւորութիւն է ստանում Հռոմից: Որքան որ է, ինչ կերպարանք էլ նա ունենայ, ամեն դէպքում անփոփոխ է մնում այն հանգամանքը, որ որսողը աւելորդ է համարում որսվողի հոգու հետ գործ ունենալ, այսինքն կշռել և չափել թէ որքան ազնուութիւն և շնորհակցութիւն կայ այդ հոգու մէջ, որքան անկեղծ ու ճշմարիտ է նրա ընկճվելը: Կրօնական որսորդը բռնված է մի ինչ-որ տենդով, նրան հարկաւոր են միաւորներ՝ դարձի եկածների հաշիւը բազմացնելու համար, այդ պատճառով էլ շատ և շատ անգամ որսորդն ու որսը խառնում են միմեանց, մի վարմունք, որ չէ կարելի անհնական համարել այդպիսի դէպքերում: Գալանտն էլ խառնված տեսակ իրան հայոց պարտիաբարանում:

Այդ մրցութեան մասնակից են նաև Գերմանիան, Ֆրանսիան, Աւստրիան, Բելգիան, Իտալիան և ուրիշ պետութիւններ: Իւրաքանչիւրը վաճառանոց է որոնում իր արդիւնագործութեան առարկաների վաճառահանման և առաքելից իր գրամազուրկների շահեցման համար: Բնատիկ մի հետազոտութեան մէջ, որ նորերս հրատարակեց ռուս-պարսկական երկաթուղային գծի մասին, պնդում է, որ Ռուսաստանը նոյն իսկ առաջին տարիներից սկսած, կը ստանայ մեծ շահ երկաթուղուց: Նա հաշվում է երկաթուղու արժողութիւնը 140 միլիոն ռուբլի, իսկ տարեկան եկամուտը՝ 17 միլիոն, որից զուտ արդիւնը կարող է մնալ չորս—հինգ միլիոն: Անգլիայում հասունանում է մի նոր ծրագիր՝ երկաթուղի շինելու: Պարսկաստանի հարաւ-արեւմուտքում և կապելու նրան Բաղդադի երկաթուղային գծի հետ, որի շինութիւնը գտնվում է գերմանական դրամատիկների ձեռքին:

Պարսից կառավարութիւնը հաշտ աչքով է նայում եւրօպացիների Պարսկաստանի մտնելուն, բայց մի և նոյն ժամանակ երկիւղ է կրում, որ մի գուցէ նա բոլորովին ստրուկ դառնայ օտար կապիտալներին, որոնք սկսել են շղթայել երկրի ամեն կողմից: Պարսից կառավարութիւնը որոշել է կրթել պարսիկ պատանիներին և երիտասարդներին, ընտելացնել նրանց եւրօպական կրթչերին և պատրաստել գործելու երկրի մէջ իրեն նոր կուլտուրական ոյժեր: Սակայն այդ փորձերը շատ թոյլ են և սահմանափակ չափով: Բացի այդ պէտք է լուրջ կերպով հոգ տանել, որ երկրի մէջ փոխվեն վարչական կար-

կարել էին թէ Կիրակոս պարտիաբար, թէ նրա փոխանորդը և թէ ուրիշները: Եւ ահա Հռոմի գործակառարը հաւաքում է մի խումբ հայ հոգեւորականներ, ծրագրում է փողով կաշառել թիւքը կառավարութիւնը և պաշտօնաւանակ անելով պարտիաբարին, նրա տեղը նստեցնել իր կուսակիցներից մէկին: Կարծեք առաջին անգամն էր, որ մի օտար հոգեւորական այսպիսի համարձակութեամբ խառնվում էր հայոց եկեղեցու գործերի մէջ: Եւ եթէ այս միջամտութիւնը Գալանտին եռանդի և ճարտիկութեան վերջական է, միւս կողմից նա ցոյց է տալիս թէ որ աստիճան ստոր ու անբարոյական էին հայ հոգեւորականները: Մեղքիւթ կաթողիկոսը անհատական երեւոյթ չէր, այլ ժամանակի կղերականութեան մի ընդհանուր, հաւաքական տիպ: Արեւելեան Հայաստանում Սիւնեացի զբաղողը կարողացաւ գտնէ առ ժամանակ հեռացնել այդ տիպը ասպարէզից, իսկ Արեւմուտքին նա չը հասաւ և այնտեղ շահամու հոգեւորականութիւնը դեռ երկար պիտի շարունակէր իր խայտառակութիւնները...

Բայց Գալանտի գաւադութիւնը աշողութիւն չունեցաւ. նրան մասնեցին թիւքը կառավարութեան ձեռքը և նա հազիւ կարողացաւ ֆրանսիական դեսպանի միջոցով ազատվել մահից և փախչել Իտալիա: Այդտեղ նա Պրօպագանդայի գլխորդում հայերէնի ուսուցիչ չը շանակվեց և ապա ուղարկվեց Լեհաստան հայերի յամառութիւնը կոտորելու և կաթօլիկացման գործը շտապեցնելու համար: Պորտո Պրօպագանդայի մի Պրօպագանդայից այդպիսի յանձնարարութիւն էր ստացել, բայց չը կարողացաւ մի բան առաջանել, որովհետեւ այնպիսի խաղաղացող զինք չուներ, որ եզուիտները

զերը, որոնք ներկայումս մեծ խոշորացում են հանդիսանում երկրի զարգացման: Պարսկաստանի մէջ նոյն իսկ այժմ բացակայ չեն կուլտուրական ոյժեր. թէ պարսիկներն և թէ տեղական հայերի մէջ կան ընդունակ տարրեր, որոնք կարող էին արդիւնաբար գործունեութիւն սկսել երկրի մէջ և նրան զարգացնել. բայց նրանք խրախոյս չեն գտնում երկրի ընդհանուր կարգերի մէջ և ապահով չեն, որ սկսած գործը կարող է անարգել և հաստատ առաջադիմել: Պարսկաստանը պէտք է շտապի վարչական բարեփոխութիւններ և մտնել իր երկրում, առանց որոնց կասկածելի է ամեն մի լուս գիտաւորութեան և ծրագրի իրագործումը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Ինչ որ վերին աստիճանի սրտաշարժ և մի և նոյն ժամանակ ոգևորիչ բան կոչ այն յարգանքի մէջ, որ մարդիկ ցոյց են տալիս դէպի մեռածները:

Երբ յարգանքի ցոյցեր են անվում մէկին նրա կենդանութեան օրով, օրինակ յօբելանի ժամանակ, յաճախ դժուար է լինում որոշել կեղծ անկեղծից, և ինքը հանդէս, որի ծրագրեր առաջնաց յայտնի է լինում յարգվողին, կրում է իր մէջ ինչ-որ մի անակարծ, ինչ-որ չինծու մի բան, որ մասամբ փչացնում է ամբողջ յարգանքութիւնը: Բայց երբ տեսնում էք անշունչ մի դիակ, անզօր, անգիտակից, և նրա շուրջը բաց դուրանի երկիւղածութեամբ խոնարհվում,—այն ժամանակ հաւատում էք, որ արդի խորքից են բխում յարգանքի այդ նշանները, և միաժամ չէք համարում այլ ևս հոռիակցի փիլիսոփայի խօսքերը—«Homo res sacra homini»:

Այո, մարդս նուիրական բան է մարդու համար, թէև, դժբաղդաբար, ոչ միշտ, այլ միայն արտասովոր րօպէներում, երբ մենք դուրս ենք գալիս մեր առօրեայ կեանքի թըշնամութեամբ յարեցած միջնորդութիւն:

Ահա այդ տեսակետից մեծ դասախարակիչ

վրդովեցան և հեռացնել տուին նրան: Գալանտը, ի հարկէ, այդպէս չէր. նրան յանձնված էր Լիվոյի մէջ հայերի համար բացված պապական դպրոցը, բայց նա միայն մանկավարժ չէր, այլ և զեկավարում էր այն բնութիւնները, որոնք այնքան անպատիժ կերպով գործադրվում էին հայերի դէմ: Հայերին նա սիրելու չէր, ինչպէս ցոյց են տալիս և Գալանտի գրքերը. և հայերի վերաբերմամբ նա այն կարծիքն ուներ թէ դա մի խաբւայ ազգ է: Լեհաստանում էլ նա մեռաւ, մեծ ջառ պատճառով: Պրօպագանդային, որովհետեւ կաթօլիկ ուղղափառութիւնը այդ մարդուն համարում էր «Աստուծո խաբարան» Արեւելքի հերետիկոսների համար» *):

Ահա այդ տեսակ կրքերով վառված մի մարդ յանձն է առնում պատմագրի պաշտօնը և գրում է «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմից» անունով մի աշխատութիւն, բազմաթիւ երեք հատորներից, որոնցից առաջինը պատմական մասն է պարունակում իր մէջ, իսկ մնացած երկուսը—վիճարանական մասը: Առաջին հատորը լոյս տեսաւ 1650 թվականին, ի հարկէ, Պրօպագանդայի տպարանից: Հայերէնի հետ զրկված էր և լատիներէն թարգմանութիւն: Դա առաջին խոշոր երեւոյթն էր հայկական տպագրութեան մէջ: Առաջին անգամն էր, որ մի եւրօպացի հայագէտ խօսում էր հայ ազգի անցեալի մասին, չօշափում էր նրա համարեա 1200 տարեկան հոգեւոր կեանքը, որի մէջ ցոլացել էր ազգի ամբողջ մտաւոր կարողութիւնը: Բայց ինչպէս էր այդ հայագէտը կատարել իր գործը:

*) «Անի միութիւն», եր. 121.

նշանակութիւն ունեն դամբանականները, ցաւակցական հեռագիրները, պատկերներ և այլն, և պէտք է շատ միտիւթարական երեւոյթ համարել այն, որ հայ հասարակութիւնը սովորել է պատուով թաղել իր համակրելի մեռելներին:

Սակայն մի բան ամենեւին միտիւթարական չէ: Հայերս շատ նման ենք Հայկեայի մօրը: Մենք մոռանում ենք մեր մեռելներին դեռ չը մաշած այն կօշիկները, որոնցով դնում էինք նրանց դագաղի յետեւից՝ սգակիր և յուսահատ:

Գտնէ միշտ այժմ այդ պղպղէս և կղեր: Մենք կատարել ենք հոգեհանգիստներ մեռած գործչի համար, զրկել ենք պատկերներ նրա դագաղի վրա, ուղարկել ենք ցաւակցական նամակներ ու հեռագիրներ, զգացված դամբանականներ ենք ասել, և կարծել ենք, թէ արդէն կատարել ենք մեր պարտքը ամբողջապէս: Ցուալի է մտածել, որ կարող է նոյնը լինել ևս այժմ, Գրիգոր Զանգեանի մահից յետոյ:

Ցուալի է մտածել, որ այն գործը, որին նուիրված էր նա ամբողջ հոգով իր կեանքի վերջին տարիներում, կարող է թաղվել նրա հետ:

Ցուալի է այդ ոչ միայն խելոք որդերի նըկատմամբ, որոնք կրկնակի որբացան այժմ, այլ և հէնց հայ հասարակութեան նկատմամբ, որովհետեւ այդ մի ազգացոյց կը լինի, որ հայ հասարակութեան յաւանութիւնները շատ աւելի մեծ են, քան նրա արժանիքները:

Տ. Յ.

ՆԱՄԱԿ ԾՈՒԾՈՒԹ

Յուլիսի 23-ին

Մի քանի անհետաքրքիր ներկայացումներից յետոյ, դերասանական խումբը յուլիսի 21-ին խաղաց իւզէի «Ուրաւակներ» դրաման և «Ճարահատեալ դերասան» վոյզվիլը: Խաղը ընդհանրապէս անցաւ շատ սպան ու թոյլ, միայն վերջին տեսարանում, շնորհիւ պ. Արէւիսի, ստացաւ կենդանութիւն և մեծ ազդեցութիւն թողեց: Ի դէպ ասեմ, որ միշտև հիմա խաղացել են համարեա կօմիդիաներ և ֆարսեր, ի բաց առած մի քանի դրամաներ ու մի ողբերգութիւն, և ինչպէս լուծւում են, մըտադիր են բոլորովին ողբերգութիւն չը խաղալ իսկ թէ ինչու—այդ մեղ յայտնի չէ, բայց ցանկալի է, որ հասարակութիւնը չը զրկվի և այդ ճիւղի պիէսներից:

Տարրական հասկացողութիւն է, որ պատմութիւն գրելու համար հարկաւոր է բարեխիղճ, բազմակողմանի ուսումնասիրութիւն, պէտք է ազատ լինել կրքերից և նախապաշարմունքներից: Գալանտն ունէր մի այդպիսի ուսումնասիրութիւն կատարելու յարմարութիւնները. նա ապրել էր հայերի մէջ, գիտէր նրանց լեզուն, կարող էր ձեռքի տակ ունենալ հայ և օտար լեզուներով գրված աղբիւրների մի հարստութիւն: Բայց երբ մարդկային տեսութիւնը միջնացած է նեղ, անհաշտ աղանդաւորութիւնից, այն ժամանակ փաստերն ու իրողութիւնները մոռացութեան են արհամարհանքի են մատնվում, իսկ պատմութիւնը դառնում է ոչ թէ ճշմարտութեան, այլ ստույգիւնների և աղճատումների հայելի: Գալանտը չէր կարող անկողնապահ, ստանաիրտ պատմագրող լինել: Բայց նա իր այդ բացասական յատկութիւնները այնքան մեծ չափով ի չարն էր գործ դրել, որ հարկւր տարուց յետոյ նրա գործի առաջ իր վրդովմունքը չէր կարողանում պահել նոյն իսկ այնպիսի մի կաթօլիկ պատմագիր, ինչպիսին էր Հ. Չամչեան:

Վերջնելով Գալանտի պատմութիւնից մի կտոր, Չամչեանը սուր քննադատութեան ենթարկեց նրան *) և ցոյց տուեց թէ գործը ինչ արժանաւորութիւններ ունի: Գալանտի պատմութեան աղբիւրը մի ինչ-որ պատմագիր է, որի անունը նա երբեք չէ տալիս և որը ոչ ոքին յայտնի չէ: Բացի այդ դրաւոր աղբիւրից թէպէտեւ քաջ կրօնաւորի առաջ եղել են զանազան բերանայի աւանդութիւններ, աւանդակներ, որոնց նա լսել է իր ժամանակի ձերբերկից, հաւանականորէն՝ կաթօլիկ հայերից:

*) Պատմ., հատ. Բ., կր. 653—670.

Ամսին 23-ին, կիրակի օրը, դերասանները տուրն ժողովրդական ներկայացում—«Աստ-լան-Բալասան»։ Քաղաքական աշխարհը երևա-լու ազդեցությունը թողնելով, ժողովրդի վրա ներկայացման վերջը պ. Արեշևանը յայտ-նեց, որ իւրաքանչիւր կիրակի, ցերեկով, կը տրվի ժողովրդական ներկայացում եւ չորհաւորեց ժողովրդի առաջին ներկայացում յաճա-խելը։ Պէտք է ասել, որ գնորդ բաւական է ժա-նացած էին, ուստի բաւական հասարակու-թիւն էր հաւաքվել, գլխաւորապէս ժողովրդի ստորին խաւերից, որ եւ հեռացաւ բաւական հանձնի տուրնը։ Երբ արդէ տակ-յոյ կայ, որ հասարակութիւնը սիրով կը յաճախէ նաեւ հե-տեւեալ ներկայացումները։ Դերասանները գովելի ձեւերով ներկայացումները էին նաեւ պ. Գ. Ժամարանը ու Թամարանը իրանց հաշուով բաւական թիւով չունենոր ժողովրդական ներկայացում ուղարկելով։ Ցանկալի է, որ յարգելի խումբը չարունակէ մի շարք նոյն ուղղութեամբ ներ-կայացումներ, որով ժողովրդի մէջ սէր զար-թեցրած կը լինի դէպի հայկական բեմը։ Բայց որովհետեւ խումբը ժողովրդական ներկայա-ցումները մասին է, ուստի մի քանի խումբ այդ առիթով ժողովրդական ներկայացումները ա-ղողութեան համար, լայն գնդեր մատչելի լի-նելուց, պէտք է նկատի ունենալ եւ մի ուրիշ անհրաժեշտութիւն։ Պիտան էլ պէտք է մատ-չել լինի ժողովրդին, որ կարողանայ բաւա-կանութիւն տալ նրան ու կրթիչ ազդեցութիւն ունենալ։ Բայց «Աստլան-Բալասան» պէս մի պիտան այդ պահանջները չէ կարող լրացնել։ Եւ, նա ժողովրդի որով զգացմունքները չորում է, նրա արտիստ մօտ է, լայն աւելի լաւ է ժողովրդի կեանքը իր բոլոր ծաղկերով ներ-կայացնող պիտաներ ընտրել։ Պէտք է ներ-կայացնել ժողովրդի իրական կեանքը իր զրա-կան եւ բացասական կողմերով։ Դա կրթական հանգանակութիւն կունենայ։ Ցանկալի է, որ մեր ժողովուրդը օգտուի հանգամանքից եւ ամեն կերպ աշակցէ ձեռնարկողներին։

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻԾ

Յուլիսի 24-ին

Գանձակցի, Չալու փողոցում բնակվող մի հայ, ըստ իր սովորութեան, 300 ռուբլի է վերցնում, ձի նստում գնում, որ տաւար առնէ։ Հաջորդապէս ձանապարհին, որի չորս կողմը պատած է անտառով, երկու թէ երեք վերստի վրա անընդհատ պատահում են երեք հողի աւազակներ, ձանապարհից քաշում են նրան անտառը եւ այնտեղ նրան թաղանթում։ Յետոյ, երբ աւազակները սպանելու դիտաւորութիւն են ցոյց տալիս, անմիջ զոհը, մահի սարսափից կաշկանդված, յայտնում է աւազակներին, թէ ինքը մի խեղճ թուրք է եւ խնդրում է խնայել։

Եւ ահա այդ կասկածելի նիւթերի վրա հիմնված, նա ինքնապատահ կերպով խօս-տում է հայ եկեղեցու մասին, կատաղի ա-տկուութիւն է ցոյց տալիս այն հայ հոգեւորա-կանների դէմ, որոնք եկեղեցիները միութեան հակառակ են եղել, մեծ-մեծ վճիռներ է կայաց-նում, մի խօսքով անում է այն, ինչ կարող էր անել մի կաթոլիկ միսիոնար, որի համար ան-հասկանալի, յուզիչ ու անտանելի բան էր թէ ինչու հայերը յամառութեամբ կպած են իրանց եկեղեցուն եւ չեն ուղղւած Հոսոմ գնալ, այն էլ իր պէս մի «բարեխիղճ» կրօնաւորի առաջ-նորդութեամբ։ Հերետիկոսներ վերկելու համար նա նոյն իսկ անվայել խարդախութիւններ է արել։ Այսպէս, նա մի տեղ վկայութիւն է բերում մի եկեղեցական ժողովից, որին նոյն իսկ լատին եկեղեցիներ չէ ընդունում, իսկ մի ուրիշ տեղ նա խարդախ է եփեսոսի ժողովի մի որոշումը, որպէս զի ցոյց տայ ինչ հայերը այդ որոշումով պարտաւորված էին հնազանդվել Հոսոմի պապերին։ Եւ այլ այս տեսակ քաջա-գործութիւններ՝ մարդկանց մոլորեցնելու, խա-բելու համար...

Մենք երկար ուշադրութիւն դարձրինք Գա-լանսի եւ նրա գրուածքի վրա, որովհետեւ, ինչպէս ասացինք, հայերէն ինքնուրոյն աշխա-տութիւններ XVI դարի սկզբից մինչեւ XVII-ի կէսը չէին լոյս տեսնում ապագութեամբ։ Մի գրականութիւն չէ կարող ապրել լոկ անցեալի գործերով, նա ժամանակի հետ առաջացող պի-տի լինի, անցեալի հետ նա պիտի ունենայ եւ ներկայ։ Գալանսի պատմութիւնը առաջին գրական նորութիւնն էր, որ ժողովրդա-կանանում էր սուրբանի միջոցով, այնքան երկարատեւ գրական ամուլութիւնից յետոյ։ Մենք տեսնեք թէ ինչ արժանաւորութիւններ

իրան, մանաւանդ, որ փոքր երեխաներ ունի ու ինքն է նրանց միակ տէրը։ Աւազակները, հաւատարմ չնայ, բայց են թողնում։ Բայց ա-նորդը ճակատագիրը ուրիշ կերպ է անօրինում նրա վիճակը։ Իսկոյն եւ եթ աւազակներից մէ-կը յայտնում է իր ընկերներին, թէ ի դուր արձակեցին իրանց զոհին, հաւատարմ նրան-առանց ստուգելու, թէ ճիշդ որ թուրք է, եւ մի աւազակ գնում է բռնում հային ու բե-րում ընկերներին մօտ։ Մանաւանդ գնեցուց յետոյ, բացվում է, որ այդ անորդ հայ է եւ ոչ թուրք։ Բայց ճարտար է լինում հայը, նա ասում է, որ եթէ միշտեւ հիմա ինքը չէ թըլ-պատված, դա նրանից է, որ յարմար տեղ եւ միջոց չէ գտել եւ թէ ինքը իրան հաւատով եւ սովորութիւններով թուրք է համարում։ Այս բացատրութիւնը տալուց յետոյ աւազակ-ները նրա աչքերը պինդ կապում են, ձի եւ նստեցնում են իրանց հետ տանում՝ մի գիւղ, այնտեղ հրաւիրում են մօլլային, թղտաղ են տալիս հային եւ յանձնում նրա ինամատարու-թեան եւ խիստ հակողութեանը, իսկ իրանը գնում են իրանց սովորական թաղանի ետեւից։

Երեք օր չարժեքի ներառած թուրքը ան-կողմում պառկած է մնում եւ իրան ջերմեռանց մահանգական ձեւադրելով, գրաւում է բոլորի հաւատը դէպի իրան, այնպէս որ խիստ հակո-ղութիւնը թուլացնում են եւ հայը խորաման-կութեամբ սկսում է հարց ու փորձ անել, թէ ինչ է այն գիւղի անունը, ուր բերել են իրան, ինչ է թղտաղ մօլլայի անունը, ովքեր էին աւազակները, որ այնպէս բաղդաւորեցին ի-րան, դարձնելով միւսկիման։ Ամեն ինչ մանրա-ման սովորելուց յետոյ, վրա չորրորդ օրը, երբ ամենքը հանդիման էին, որ մարգարէի զուա-կների թիւը մէկով էլ աւելացաւ, նա ծածուկ, լուսադէմին, գիւղի քնած ժամին, գոմից ձին հանում է, նստում, երեսին խաչ քաշում, սուր-Սարգիս անունը տալիս եւ ճանապարհ ընկ-նում։ Եւ գալիս հասնում է իր տունը եւ այնտեղ անկողին մտնում։ Նրա ազգականները իսկոյն այս բոլոր եղելութիւնների մասին յայտնում են քաղաքային ռատիկանութեանը, որը առանց մի քաջ ուշադրելու գնում է հիւանդի մօտ, ման-րաման հարց ու փորձ անում եւ ամեն ինչ արձանագրում ու ուղարկում գաւառապետին։

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԿԻԾ

Յուլիսի 15-ին

Բօժօժաբաղը չըջալայ գիւղերում վաղուց վերջացել է։ Գիւղերում թթնու անկա-րաններ չը կան, եւ որովհետեւ այս տարի չե-րամապահներ սովորականից դուրս մեծ քա-նակութեամբ չերաւ էին պահում, ուստի տե-րեւ գինը շատ թանկացաւ, իսկ սրա հետեւ-անքն այն եղաւ, որ այս տարի բօժօժից օգ-տվողները քիչ եղան։

Ունէր այդ նորութիւնը։ Պրօպագանդան կղե-րակաւ-սիօլաւապական վեճերով ու գրական անբարեխիղճութիւններով ծանրաբեռնված մի աշխատութիւն էր չորսում հայերին։ Եւ հայե-րը այդպիսի անուղիչ էին կարօտ, այն հայերը, որոնք առանց այդ էլ ունէին մի բացառապէս կրօնական գրականութիւն, այնքան տանջվել էին ուղղափառական վիճաբանութիւններից, հալածանքներից ու անէմփիւրից։ Հէնց այն հանգամանքը, որ մի այդպիսի աշխատութիւն անգամ ուշադրութեան արժանի մի գրական երեւոյթ էր հայերի մէջ, ցոյց է տալիս թէ դեռ որքան ոգորմելի գրութեան մէջ էր մեր գրականութիւնը այն դարում։

Մի ուրիշ հանգամանք էլ կարեւորութիւն է տալիս այդ գործին։ «Աւստուծու խարազանը» կաթոլիկ եկեղեցու մէջ հեղինակութիւն էր ձեռք բերել իր բարոյական եւ պատմագրա-կան տխուր քաջագործութիւններով։ Այդ պատ-ճառով էլ շատ հեղինակներ կուրթէին հետեւե-ցին նրան, կրկնելով այն ամենը, ինչ կար նրա գրքի մէջ։ Այսպիսով արեւմտեան աշխարհը հայի քրիստոնէութեան մասին կարծիք կաղ-մեց Գալանսի գրքի վրա։ Իսկ դա փոքր զըր-կանք չէր հայութեան շահերի տեսակէտից առհասարակ։ Բայց դրանից, Գալանսի պատ-մութիւնը սատարի ազդեց եւ լուսաւորչական հայերի վրա, բայց գոնէ այն օգուտը առաջաց-րեց, որ հարկադրեց նրանց պաշտպանվել, պա-տասխանել։ Մենք շատ հեռու ենք այդ հակա-ճառութիւնները, ընդդիմաօսութիւնները գրա-կան փոքր ի շատէ աչքի ընկնող գործերի շարքում գնելու մտքից, բայց սպառնալից գոր-ծի, գրական զգայնութեան զարգացման տե-սակէտից չենք կարող ասել, թէ դրանք մի-անգամայն անօգուտ էին։ Յատկապէս կաթոլիկ

Գիւղերում չերամապահութիւնը կատարվում է նախապես եղանակով, պահում են 6—18 մսխալ չերամ, սակայն բերք ստանում են 10—15 փունտ բօժօժ ամեն մի մսխալից։ Շե-րամապահութեամբ պարագում են բացառապէս կանայք, աղամարդիկ բոլորովին չեն խառնվում գործին։ Սերմ նրանք չեն գնում, այլ վերց-նում են Զաքարիայի չերամապահներից այն պայմանով, որ բերքի չորրորդ մասը տրվի սերմ բաժանողին։ Շատերի չերամը փչացել է որդերի երկրորդ շրջանում պերքին հիւանդու-թիւնից, նոյնպէս եւ ցախի վրա բարձրանալիս։ Թանգ գնելով տերեւ եւ գրկվելով դաշտային աշխատանքներից, մի քանի գիւղերի տանու-տէրերը կարգադրեցին, որ բօժօժի պուղը ծախվի ոչ պակաս 20 ռուբլուց, սակայն գեղջ-կուհիները ստիպված եղան խառնելու բօժօժի պուղը ծախել 11—13 ռ.։ Զը ստանալով օ-գուտ՝ շատ կանայք հրաժարվում են ապագա-յում չերամ պահելուց։

Փորձի համար ինքս այս տարի Լիանոզեան ուսումնարանում պահեցի 3 մսխալ չերամ՝ դե-ղին, խառնական տեսակից, գիտութեան պա-հանջների համաձայն, եւ ստացայ 1½ պուղ բօժօժ կամ 20 ֆ. մի զօրօտիկից։ Գիւղացի կանայք յաճախում էին իմ չերամատունը եւ զարմանում էին որդերի հորատարութեան վրա։ Որդերի ինամատարութեան ամբողջ ըն-թացքում հիւանդութիւն չերեւաց, անհշտ քանակութեան միայն կոտորվեց զեղնացալից։ Այսպես չերամի համար եւ գինի 13 ռուբլու տերեւ եւ դեռ եւս չը բաւականացաւ, իսկ ամբողջ ծախսը նստեց 25 ռ.։

Փորձերը ցոյց են տալիս, որ չերամապա-հութիւնը մեր գիւղերում կարող է զարգանալ, կարող են առաջ գալ թթնու անկարանները, եթէ միտք գնահատվի չերամապահի աշխա-տանքը, իսկ ներկայ պայմաններում խառնական բօժօժի պուղը ծախելով 11—13 ռուբլի եւ տեղական միտաքը 3 ռուբլի՝ չերամապահը չէ վարձատրվում, ուստի եւ տերեւ ունեցող-ներն աւելի լաւ են համարում տերեւ ծախել։

Եկեղեցական յանձնաժողովը անգործութեան մասինց իրան Յանձնաժողովի անդամները, զբաղված լինելով կողմնակի հարցերով, մոռա-ցել են իրանց պարտականութիւնը եւ չեն շա-րունակում գործունէութիւնը։ Մի փոքր առաջ նախկին երէցիքի Ս. Ամիրխանեան «Մշակում» մեղադրեց յանձնաժողովի անդամներին, որ իրա-նից հաշիւէն առնում, իսկ մեր հաշուաւորները, որոնք թէ իրական ժողովներում եւ թէ մանաւ-ւոր կերպով դատապարտում են Ամիրխանեանին հաշիւ չը տալու համար, լուրջեամբ մարտնչին Ամիրխանեանի պատասխանը։ Ցաւալին այն է, երբ մարդիկ չը կամենալով բան չինել կամ անչորհք լինելով՝ ընտրել են տալիս իրանց եւ պինդ մնում են ասպարէզում՝ ոչինչ չը չի-նելով...

Բարեխաղող եղանակների չորսում՝ այս տարի

բարոյացութեան դիմադրելու նպատակով, ինչ-պէս յետոյ կը տեսնենք, 1687—1688 թական-ներին վերաբացվեց Զուգայի սուլթանը եւ Ամենափրկչի միաբանութեան անդամներից երկուսը, Յովնանեւ Մրգուդ եւ Ալէք-սանդը (որ յետոյ կաթոլիկոս եղաւ) սուլթան-ցին իրանց գրած հեղինակութիւնները, որոն-ցով հերքում էին կաթոլիկների ամբաստանու-թիւնները։ Իսկ եթէ չէ անաղ գնանք, կը տես-նենք որ XVIII դարի կէսում ճոյն Գալանս-սին հերքելու համար առաջ է գալիս նոյն իսկ ձրի հրատարակութիւնը, գրեց սուլթանը հա-յերի մէջ։ Մի անգամ մարդ իր ծախսով տը-պագրել է տալիս Գիտքի վարդապետի մի վի-ճաբանական գրութեանը փոքր դրոշմով, գրա-նի կամ ծոցի մէջ պահելու համար, եւ տա-րածում է այդ գրքը ձրի։ Մրցութեան կարիքը նոր երեւոյթներ էր ծնեցնում հայերի մէջ, Բոյոր այդ երեւոյթները ուրախալի չէին։ Ընդ-հակառակն, շատ շատերը կատարեալ դժբախ-տութիւն էին աղբի համար։

Սակայն եթէ Գալանսի չափազանց նեղ-սիրտ էր եւ միակողմանի, մենք չը պիտի նոյն այդ կերպով էլ վերաբերվենք նրա ամբողջ գործունէութեան։ Պատմութիւնը, ինչպէս աս-ւել է կրկնեմ, չը պիտի սուտ ասէ, ոչ էլ թաղան էր եւ է ճշմարտութիւն։ Եւ հայոց գրականութեան պատմութիւնը չէ կարող մո-ռանալ, որ նոյն Գալանսի կազմեց նաեւ հայերէն քերականութեան եւ տրամաբանու-թեան դասագրքը, որ սուլթանից Պրօպագան-դայի սուլթանում 1645 թական Երկար տարի-ներ հայերէն լեզուի ուսուցչութեան պաշ-տօն վարելով, Գալանսը հայագիտութեան մէջ հեղինակաւոր մարդու համար էր վայե-լում եւ նրա դասագրքերը, երեւի, գործածա-

գաւառում սպաւում է հացաբոյսերի առատ բերք։

Նահանգապետի կարգադրութեամբ մեր քա-ղաքային ընտրութիւնները նշանակված են հոկտեմբերի 11-ին։

Յ. Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգիստայի անկարգութիւնները, որոնց մասին մենք լուր էինք տակ, տեղի ունեցան յուլիսի 17-ին եւ 18-ին եւ ուղղված էին, ինչպէս հա-ղորդում են մի քանի առաւ լրագրիներ, հրէականի դէմ։ Սկզբնապատճառն այն էր, որ Զինատան ուղարկվող զօրքից մի զինուորի խաբլի էր մի հրէայ, իսկ մի ուրիշ արկայ հրէայ հանել էր նրա գրպանից փողի քանակ։ Անկարգութիւն-ների ժամանակ վնասվել են շատ մագաղիներ։

Ներկայ ամառը շատ անձրեւային է։ Անդըր-կովկասի զանազան կողմերից ստացվող նամակ-ներից իմանում ենք, որ անձրեւներ են գալիս ամեն տեղ, թող չը տալով գիւղացիներին արտելը կախել։ Այսպէս, Շուշուց մեզ հաղորդում են, որ անընդհատ տեղացող անձրեւներից արտելը նորից կանաչել են։ Թիֆլիսում էլ անձրեւներ են գալիս եւ մեղմացնում ամառվայ տոթերը։ Այսպիսի հով ամառ Թիֆլիսում վաղուց չէ տեսնված։

«Рус. Вѣд.» լրագրում կարգում ենք, «Ե-րէկ յուլիսի 23-ին, Մկրտիչ I Կաթողիկոսի հրամանով, Մօսկվայի հայոց եկեղեցում հոգե-հանգիստ կատարվեց Գ. Զանգեանի յիշատակին»։

«Кавказ»-ին հաղորդում են Երեւանից, որ այնտեղ Մօսկվայից պաշտօնական տեղեկու-թիւն է ստացվել, թէ Շարուր-Դարապետեանի գաւառի նախկին կառավարիչ իշխան Ս. Թու-նասով, որ մեղադրվում էր արքունի փողի վանդակ մէջ, մեռել է այնտեղի հիւանդա-նոցում։

ԵԱԼՏԱՅԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 23-ին պ. Ա. Մատուրեանի նախաձեռնութեամբ եւ խումբ բազմութեան ներկայութեամբ՝ տեղի հայոց աղօթատանը կատարվեց հողհանգիստ Գրիգոր Զանգեանի յիշատակին. պ. Ա. Մատու-րեան մի գեղեցիկ դամբասական խօսեց հան-գուցեալի գործունէութեան մասին, իսկ պ. Ս. Շահապետ մի բրօնդ պակսի գրեց, թէ որքան հայ պաշտօնականները յարգում էին հանգու-ցեալին, այդ երեսնց նրանից, որ թէ աղօթա-տան ներսում եւ թէ դրսում ասեղ գցելու տեղ չը կար։ Երբ պ. Մատուրեան բացատրում էր, թէ Զանգեանը իր «Եղբայրական օգնու-թիւն» գրքով ինչ օգուտ տուեց թիւրքահա-հազարաւոր որդերին, շատերը սկսեցին լայ վրիճել։

Կան էր գոնէ բոլոր հայ կաթոլիկ զարդնե-րում։ Բայց չենք կարող ասել, թէ Գալանսի իրեւ հայագէտ, այնքան բարձրացած լին սովորական միջակութիւնից, որ կարողանա-իր քերականութեամբ մի բան անել հայոց լեզուի անկան դէմ։ Բաւական է, օրինակ համար, աչքի առաջ ունենալ նրա սիրելի ա-շակերտ Վարդան Յունանեանի «Ջեղաճառ-թիւն յերկին» անունով թարգմանութիւնը, որ սուլթանից է ձեռնարկ 1671-ին, եւ մենք կը տեսնենք, թէ ինչ սուսկալի հայերէն էր ա-ւանդութեւ պատական զարդներում։ Եւ դե-ռայդ վարդան Յունանեանը համարվում էր քաջ հայագէտ եւ ընդունակ գրող, Լիվիի դեպ-րոցի փառք ու պարծանք...

Այդ զարդի մասին մենք շատ ասելիք չու-նենք, քանի որ արդէն նկարագրել ենք, թէ ինչ էին ներկայացնում ա. Պետրոսի դանձառա-կի միջոցներով պահվող զարդները՝ առհասա-րակ։ Լիվիի զարդը, որ այնպիսի ներդրոյնե-րով նկարագրում են նրա մէջ ուսուցչութիւն արած լատին կրօնաւորները *), բնութիւննե-րով ստեղծված, եղութաւորական դարափառներով զեկավարվող մի կաթոլիկ կղերական էր։ Նրա յատկացրած էր ահապին դեր Լեհաստանի հա-յերի կաթոլիկացման գործի մէջ. նա պիտի զբաւէր յամառ հայերին նրանով, որ հայերէն լեզուն էր եր աւանդում։ Բայց դա մի շինծու միջոց էր, պատրուակ միայն։ Հայերէնի դասա-սուցները լատին կրօնաւորներն էին, որոնք այդ լեզուն մի կերպ սովորել էին Գալանսից, ինչ ազդեցութիւն կարող էր անել մի այդպիսի հիմնարկութիւնը հայերի մտաւոր կեանքի վրա։

(Կը շարունակվի)

*) Վերնի միութիւն, եր. 114—135.

ՇՈՒՆԱՎԷՐԻՑ մեզ գրում են. «Վերջին տրերս յաճախ տեղացող անձրեւների պատճառով գիւղացիները ցորենը կարսել դուռ չեն սկսել իսկ երէկվայ անձրեւախառն կարկուտը բաւական վնասեց առանց այդ էլ թող, կարծրուիւ եւ չախկա հիւանդութիւններից վնասված այգիներին: Խնդգ այգեռէրերը, ինչպէս առուներն, ձեռքները լուսցել են»: Ի դէպ, հարկաւոր ենք համարում ասել, որ աւազին քանակութեամբ այգիներ ունեցող Շուշավէրը մինչեւ օրս լաւ գինեգործ չէ ունեցել եւ չուի. անչուշտ լաւ գինեգործի նշանակութիւնը այստեղ հասկանալի չէ: Չրեայիլով բնութեան կորստաբեր խաղերին, որոնց ենթարկված է անցօր, բառի բուն նշանակութեամբ, աղքատ չուլավէրջին, բահար կուլած տուրքի քամանակ էլ ամբարշտ է ամրանալու եւ ամրանալով խորձերը ֆոկի հողատէրերին տալու, որպէս զի իրանց պահուածութեանը բաւականութիւն տալու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

«Daily Express» լրագիրը հետևեալ տեղեկութիւնն է ստացել Չիֆուէից.

«Թէպէտ եւ Տեանձինում խիստ զրաքննութիւն է հաստատուած հեռագրիներին վերաբերեալ, այսուամենայնիւ տեղեկութիւնն է ստացուած, որ երէկոյնից ալակոյ զայնակից զօրքերին արշաւանքը դէպի Պեկին եւ որ զայնակիցները արդէն հասել են Ենանտունին եւ Լօֆայի մէջ տեղում գտնւող մի կէտիւ Հետեւեալ երեքշաբթի նրանք պէտք է հասնին Պեկին: Յայտնի է, որ Տեանձինում գտնւող զաշնակիցները զօրապետները մեծ դժուարութիւններ մէջ են, որովհետեւ նրանց պարզ կերպով իմաստ է տուած, որ Պեկինի արշաւանքը կը ծառայէ որպէս նշան կատարելու այն բոլոր օտարերկրացիներին, որոնք կենդանի են մնացել Պեկինում. դեպքանասնների ուղարկոծուած զաշնակցերում իր լոկ միջին նրա համար, որ դեպքանները խոտառացի էին զայնակիցներին արշաւանքի առաջն տունը: Ասում են, թէ պալատական աստիճանաւորները Պեկինից դնում են դէպի արեւմուտք, Սիանֆու կամ Ծանսի-սան նահանգը: Դրանով է բացատրուում այն հանգամանքը, որ չինացիները աքսորում կամ կոտորում են ձանապարհի վրա գտնւող կէտերում բոլոր եւրօպայեցիներին, որպէս զի նրանք չը կարողանան տեղեկութիւններ հաղորդել իւրանց հայրենակիցներին չինական կառավարութեան փոխուստի մասին: Բարձր Նիչիի (Պեկինի եպպօնական դեսպան) նամակը ցոյց է տալիս, որ եպպօնական դեսպանատան ուլթ անդամները 6-ը սպանուած են իշխան Լուի պալատում: Բրիտանական դեսպանատան հանդէպ:

«Standard» համահայկան է համարում, որ չհնական կառավարութիւնը փորձ փորձէ մեծ զինուորներ կորզելու պետութիւններին, իբրեւ վարձատրութիւն այն բանի, որ նա թոյլ չէ տուել կոտորելու Պեկինում գտնվող օտարերկրացիներին: Լուսերբին նայելով՝ մտածողին է պատահել պետութիւններին եւ որ նրանք հեռանան Պօրտ-Արաուորէի եւ Վէյ-Սայ-Վէյից ու երաշխաւորեն, թէ դաշնակիցներին արշաւանք դէպի Պէկին տեղի չի ունենայ:

«Neue Freie Presse» լրագրի աշխատակիցները մէկը տեսակցութիւն է ունեցել Վիէնայի եապօնական դեսպանի հետ: Վերջինս յայտնել է, թէ նա չատ չէ հաւատում Պեկինից ստացված տեղեկութիւններին:

«Կայսր Կվանսուի գրութիւնները—ասել է
դեպպանը—նրա խնդիրները միջնորդութեան
մասին՝ ուղղված քաղաքակիրթ պետութիւն-

ներքի կառավարութիւններին, ինձ վրա չեն թողնում իսկականի տպաւորութիւն: Նրանց ոճը չի նական չէ թւում ինձ: Զինական կայսրը ներքի գրութիւնները սովորաբար գրված են լինում ճշուտաբանութեամբ, հոստորական ոճով: Եւ ինչպէս տարօրինակ են այդ գրութիւնները, որոնք արագութեամբ հետևում են միմեանց, սպորտ կլանաւում դիմում է կայսրները մէկին, վաղը մի նախագահի, այս բոլորը մի ինչ-որ ոչ լուրջ, յամենայն դէպս չինական կայսրներին ոչ յատուկ երևոյթի տպաւորութիւն է թողնում ճարտրինակ բան է եւ այն, որ երբ եւրոպայում պատասխաններ են տալովում Պեկինից, նրանք չեն խօսում այն հարցերի մասին, որոնք ուղղված էին չինական կառավարութեան: Այս ամենը կատակ են ածվտահոյթիւնը, է յարեցանում դէպի այն տեղեկութիւնները, որոնք տալովում են Պեկինից:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐԻԶԻՑ

«Paris-Nouvelles» գործակալութիւնը հա-
ղորդում է մեզ հետեւեալ տեղեկութիւնները
Պարիզից.

«Կապը, 31 յուլիսի, առաւօտեան ժամը 10-ին» ֆրանսական ծերակոյտի պալատին մէջ պիտի բացվի երեսփոխանական միջազգային երկրորդ համաժողովը, ընդ նախագահութեամբ պ. Ֆալէրի՝ ծերակոյտի նախագահին Բազմաթիւ եւ կարեւոր խնդիրներու վրայ պիտի խօսեն, մասնաւորապէս պիտի զբաղուին հարաւ-աֆրիկական պատերազմներու ներկայացուցած խնդրադրով։ Պօէր ներկայացուցիչները իրենց խնդրադրոյն մէջ տառով իր ըրերն այն իրաւունքները, որ սեպին թրանսվալի վրայ, որուն գրաւումը իրենք օրինաւոր կերպով են բրած, յետոյ իրենց իրենց խնդրով երկիրը բարեկարգած, արդիւնաւորած եւ հարստացուցած են, ուստի իրաւունք ունեն իրենց անկախութեան վրայ։ Թէ իրենց երկիրը վար չը մտար եւրոպական կամ ամերիկական որ եւ է երկիրէ կամ պատմութեանէ։ Թէ անդիլական գաղութները իրենց երկիրներէն գերազանց չեն։ Թէ թրանսվալի համաբաւր աշխատանք մեն է, որ ամեն երկիրներէ օգտակարներն հոն իր թափին եւ կուզեն քաղաքացիներն իրաւունք ստանալ։ Եթէ կուզեն մեր հողին տիրել, կըսեն պօետներու ներկայացուցիչները, պատճառը այն է, որ մեր երկիրը օսկրի եւ աշխամանդի հանքեր ունի։ Մենք ամեն միջոց ի գործ դրինք, պատուաւ անքաղաքացի, խնդրել խաղաղութեամբ վերջացնելու, բայց անխաբարի եղաւ, վաճառ դի Անգլիոյ յենտով կուզէր մի իրաւունքի վրայ, որ չստէր։

«Մենք ստիպվեցանք զենքեր զնել եւ պետք
եղած զգուշութիւնները ձեռք առնել մեր ան-
կախութիւնը պաշտպանելու։

«Պատուիրաւններ կաւեյնհն, բռեղով, թէ ի-
րենք վստահութեամբ իր զինն համաժողովն
որ կազմած է ամենաքաղաքալիրթ երկիրնե-
րու երեսփոխաններէն եւ ներկայացուցիչներէն»

«Համաժողովն միջնատուրթեամբ հարաւ-
ածիրկական պատերազմը իրնայ վերջնալ եւ
այս գործը յարտան կանանհայնէ միջնազգա-
յին երեսփոխանական միութիւնը։

Քիանի մէջ օրերէ ի վեր Պարիզի պատերուն վրա փակցված են պաշտօնական յայտարարութիւններ (պաշտօնական յայտարարութիւնները միշտ ճերմակ թղթի վրա սեւ գրով լինելուն), որոնք Չինաստան մեկնելու համար կա՝ մասուր զինուորներն կը խնդրեն։ Կոտակարելու թիւնը կոչուծ կընէ նախկին զինուորներուն, պահեստի զինուորներուն եւ այլ մարդոց զրօշակի տակ հաւաքվելու եւ Չինաստան մեկնելու, իբրեւ կաժաւորներ, կը խոտանայ։ 200 Ֆրանկ վճարել մեկնելու պատրաստակաւ տութիւն ցուցնողներուն իբրեւ հատուցուծ իրենց խանցարանն։

Արդէն շատ թերթեր հրատարակեցին թէ Պարելի մէջ հասաաաուեր է մի քանի ամիսներէ ի վեր գրադարան ընթերցարան մը (9, rue Campagne Première) ուր կը ստացուին 30-ի չափ հայ եւ օտար թերթեր:

Այդ գրադարան-ընթերցարանի ընկերությունը անցեալ ուրբաթ երեկոյ երեկոյթ մը տուաւ, որուն ժամանակեցեալ Իտալիայէն նոր վերագործող մի երիտասարդ հայ երգիչ Երեկոյթներ ժամանակ երգեցողութիւններ (իմրով կամ առանձին)—պարեր եւ նուագաժողութիւններ տեղի ունեցան: Երեկոյ իջն քառասուն, յիսունի չափ ունեցնէր, որոցմէ մօտ 10-ի չափ հայ տիկիւններ եւ օրիորդներ:

Մի կարծեք թէ այդ օրիորդները կամ տի-
կիները Պարիզի մէջ բնակող հայերէն են, ոչ
երբէք, անոնք շատ դժուարութեամբ կը տե-

դատօրինակն, արդ տիկիններն ու օրիորդները նոյն հայերեն էին, որոնք ցուցասանդիսի առթիւ ժամանակաւորապէս Պարոյզ կը գտնուէին եւ որոնք լսելով որ հայկական երեկոյթ մը տեղի պիտի ունենայ, հետաքրքրուած ելած էին։

«Կրկնապէս թէ Վիպրիկ ընտոյթ մը լսերեր է այդ երեկոյթը դրադարանն ըստկրցարանին եւ այդ միայն ինքնաբերութեամբ եղած նուիրատուութիւններէն, վասն զի երեկոյթը ժուաքով չէր։

«Կը լսենք թէ ընկերութիւնը միտք ունի աւելի քան երեկոյթ ժը սարքել քիչ աստիճէն, նոյնպէս ի նպատու գրադարան-ընթերցարանին։

Մշտողութիւնն կը մաղթենք նորահաստատ ընկերութեանն։

ኒህሆህፋ ቅኮኮሮኮህያኮፊ

Վան, յուլիս 4-ին
Ինչպէս ձմեռները ձեր մօտ թափօրներու
հիմա ալ հոս մեր գլորոցներու քննութիւննե-
րուն ու հանդէսներուն սեղօնն է։ Եւրօպական
հասկալողութիւնները թէկէն քննութիւնները
իբր ձանձրացուցիչ եւ անկարգ ընտ ալ վերջոյն
ցած են գլորոցներէն՝ ուր ծնողները գլորոցա-
կան վիճակներուն տեղեակ ըլլալու շատ մը միջ-
ոցներ ու առիթներ ունեն, սակայն մեր աղ-
գիւր եւ ժոռտաւորը այս տեսակ գաւառները
գլորացներուն մէջ, ապրնք շատ լրթիչ ու հո-
րահանգիչ դեր մը իր կատարեն եւ ինտելի-
գենա համարված դասակարգին ստինէն սիրա-
կան ու հրապուրիչ ժամանակներն են, որով-
հետեւ ի՞նչ արարծն կայ հոս եւ քլին, ի՞նչ գրա-
դարան-ընթերցարան եւ ոչ ալ հանրակին պար-
տէշներ կ'առ ժամանարվարիք—ուսումնական-
րէն ի գատ, ուր կարողանա զիրօր տեսնել
իրարու հետ չիվիւլ Յունիօի վերջին օրն ալ
բողբակաւններու գլորոցին մէջ չըջնաւարա-
օրիորդներու հանդէսին ներկայ եղանք, որոս-
մուտքն ալ առտաստով էր—նոր սովորութիւն
մը Վանի մէջ։

Բնթաղամարտները 4 օրերոցին էին, որոնց
երկուքը հայ-լուսաւորչականներ եւ երկուքն ալ
հայ-բողոքականներ։ Այս վերջինները որ-
բեր էին եւ անդամ բողոքական եկեղեցւոյ։
Պետան երկեւս բազմութեան մը առջեւ շը-
ջանաւորս օրերոցները կարողացին իրանց թեւ-
զերի, բաւական երկայն ու խնամով պա-
րաստված, որոնց պատասխանեց զլորոցին վա-
րիչ զօրտօր Բէյնօղլս, հրաժկաի ոգջոյն տա-
լով անոնց։ Ապա Ներսէս սրբազան, ոտք ելնե-
լով, շեշտեց իգական սեռին կրթութեան կարեւ-
ւորութեանը վրա, եւ, ի միջի պալոս, սոյն դըպ-
րոցը իբր զուտ մարդասերական հաստատու-
թիւն օրինակ բերելով, հետեւեալն բաւա. «Առ-
տուած օրհնէ ասանկ հաստատութիւնները, ո-
րոնք իրանց բարեկարգութեանը մէջ մասնա-
ւոր նպատակ մը չունեն։ Շնորհակալ եմ զօ-
տօր Բէյնօղլսէն, որ այս բարեկարգութիւնները
կընէ առանց մասնաւոր նպատակի մեր եկե-
ղեցւոյ զաւակները կրթելով ու մեզ յանձնե-
լով։ ազգէն կանեն եւ կրթեալն վերջ ազգին
կուտայ։ Այս յարկը մեք են է. ամեն կերպով
պէտք է վստահենք մեր զաւակները հո-
յանանլու, որովհետեւ ես զօրտ. Բէյնօղլսի մօտ
մարդասիրութեան ի դատ ուրիշ նպատակ չեմ
եմաներ։ Իսկ անոնք, որ տարբեր նպատակով
են բարեգործներ, վատ են, ցած են ու ստորին
արարածները մարդկութեանը...»

Այս փերիշին ակնարկությունը կաթօլիկներուն համար էր: Սակայն, ըստ իս, դպրոցական հանդէսներու մէջ աչս տեսակ իօսօքերը աւելորդ ու անպտօնած են: Ամենքս ալ զիտենք, սրանտք, որոնք հեռաւոր երկիրներէ կուգան աչս տեսակ իտւլ անկիւններու մէջ բարերարելու եւ դպրոցներ բանալու, հարկաւ մամնքն ալ մամնքնոր նպատակ մը ունին, եթէ միշտային ազգին վտահնիկ մարմիններուն սիջոյաւ նպատաներ բաժնի կամ դպրոցներ բանալ վոխանակ անձամբ գալու, ինչպէս կընեն պ. Գրիգոր Զանչեանց եւ ուրիշներ: Մամնաւոր նպատակ ունենալուն արդիւնքը չիբ միթէ աչս տարուն երկու բնթայաւարտուհիներու բողոքական եկեղեցւոյ անդամ ըլլալին, որոնք իբր անտէր որբ լաւ որս եւ բած են: Կարծես, թէ բողոքականն օւ կաթօլիկը մի եւ նոյն ստոր միտումներն ու նպատակները ունեցած չըլլային հաւատարապէս...

Ես անցած տարի ալ գիտել տուի, թէ մեր
սրբազանը խօսող է մենակ եւ ոչ գործող. իր
խօսքերը շատ-շատ անգամներ կշռել չի գիտեր,
ու ասովէ անասորժութիւններ կը ծագեն երա-
նի, թէ նա աւելի լուրջ ըլլար եւ իր խօսքե-
րուն գործ ալ միանցէր, ինչպէս որ բողոքա-
կանաց դպրոցին ձակաւոր քրտած քանի մը
լավօնական ձեռով նշանաբաններուն մէջ կար-
տա ալ. «գործ՝ ոչ խօսք». չեմ գիտեր սրբազա-

Ն/ն աչքերը այդ պարբերութեան հանդիպե-
ցան...

Գիտէ՛ք, որ Ներսէս եպիսկոպոս քանի՜ մը անգամներ հրաժարական տուաւ՝ անձնական տկարութեան պատրուակով, սակայն ամեն անգամ ալ Պօլսի կենտրոնական վարչութիւնը մերժեց սոյն հրաժարականը եւ ստիպեց, որ դեռ Վան մնայ։ Այժմ, ինչպէս կիսանամ, սրբազանը որդիւ է վերջնապէս պնդել իր հրաժարականին վրա ու երթալ, որովհետեւ չի հաւանի եղբւր Վանի՝ անոր իւր պըլժ ժողովուրդին հոգսերը քաշելով եւ քննադատութիւններու ալ առարկայ ըլլալով միանգամայն։ Եւ միթէ՛ կարժէ Իզմիրի պէս փափուկ տեղ մը մեծցուցած մարմինը Վանի նման կոշտ երկրի մը մէջ մաշել... Արդէն շատուց ի վեր Վարապ քաչուեր է օգափոխ ու լի ի Սահակ վարդապետին վրիզը։ Կըսուի, թէ՛ Վարապայ կաթին ու կարապը սրբազանին ախորժակին չափ կը յարմարին եղբր։

Երկու օրէ ի վեր յանկարծ մեծ քանակութեամբ ջորեն եւ դարի եկաւ եւ գնեալուն վրամեծ անկում եւ յուսահատ ժողովրդեան վրալ ուրախութիւն առաջ բերելով:

Վերջին չաբաններս բողոքականները գիւղերուն ու քաղաքին բաւական նպաստ տուին, իսկ կաթօլիկները 3—5 ամսէ ի վեր իսպառլումս ու դադրած են եւ կարծես թէ քաջկեղեւ երեսոյթ մը ունենալ Իրանց վարդապետներէն մին ամիս մը առաջ գնաց ասկէ. ուրիշ մը կայ, անբարոյական արարքներու տէր մէկը, որ պիտի երթայ հզօր կըսուի, որով կը մնան հայր Անտոն ու երկու տեղացի վարդապետներ, ժողովուրդը ցանկացող է ասոնց ժամ առաջ երթալուն. բարի ճանապարհ...

Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պօլսից հեռացրում են «Россия»-ին. «Աուլ-
թանը իրադէ հրատարակեց, որով թոյլ է տա-
լիս անցնել Թիւրքիայի նեղուցներով սուսաց
բոլոր տեղափոխել նաւերին, որոնցով զօրքեր
են փոխադրում Զինատաան Դիւանագիտա-
կան մարմինը, ընդհանուր առմամբ, գտնում է
սուլթանի այդ որոշումը, որ սակայն նախա-
դէպ չը պէտք է համարվի ապագայի համար:

—Պօլսից հեռացրում են «НОВОСТИ»-ին.
«Հաստատվում է այն լուրը, թէ Վիերնոյ կայա-
քէ հեռադրել է սուլթանին, ինչդրեով վերջ-
նականապէս վճանել Պօլսից Բաղդադ չինելիքը
երկախնուրու հարոյս:

—Սուլթանն նորերս մի իրադէտով ազատեց
հրէայ գաղթականներին, երկու տարի ժամա-
նակով, բոլոր տուրքերից, Տուրք վճարում են
միայն այն հրէայ գաղթականները, որոնք հո-
ւ֊ղբ կն վարձում մշակութեան համար:

—Յայտնի է, թէ որպիսի անհայտ թշնամու-
թիւնն կար Վիկտոր—Էմմանուէլ եւ Ումբերտո
Մալգաթորներէ ժամանակ Վատիկանի եւ Կլի-
րինալի մէջ։ Այժմ, ինչպէս հաղորդում են ֆը-
րանսիական լրագիրները, Վատիկանում յոյս
ունեն, որ Էմմանուէլ III-ի օրով Վատիկանը
կը կարողանայ իճէ՛ն իւր բոլորովին հաշտուի,
գէթ բաւականաչափ ժօռենալ Կլիրինալին։ Այդ
յոյսով հոգեւորականները ամէն տեղ ժամանա-
ցում են այն եկեղեցական հանդէսները, ու-
րոնք կատարվում են ի յիշատակ Ումբերտո
Մալգաթորի, պապի հրամանով բոլոր կաթօքիկ
եկեղեցիներում տեղի են ունենում հոգեհան-
գիտանքի նոյն առիթով։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 յուլիսի

ԼՈՒՅՈՆ. Բօրերստ հեռագրում է Պրետո-
րիայից յուլիսի 25-ից. Ճերկիւղ եւ կրում, որ
Ելանդարիկիւրի քաղաքապահ զօրքը, փութադն-
դապետ Գօրդի հրամանատարութեամբ, գերի
ընկած լինի տամսօրեայ չինացիք իւնից յե-
տոյ, երբ Դէլարէյ իսպառ, որ Համիլտօն դը-
նամ է Բոլանտերուրդի վրա եւ տեսաւ, որ
յոյս չը կայ գերի վերցնելու Բաղէ-Պօռէլին,
չտապեց դիմել ղէպի Ելանդարիկինքս:

Համիլտոն հաղորդում է, թե՛ հրաձգությունը
 նյանդարդիկների ուղղութեամբ թուլացել է, երեկ
 Գորգ գերի ընկաւ: Համիլտոն այսօր դուրս
 եկաւ Բուսանընտրգից, ամանելով իր հետ Բա-
 դէն-Պուէլի զորաբաժինը:

Կիսաշենքեր ուղիւսորդեց գտնելու Մէտուէնին,
որ, ակնհերեւ է, Վապիւի աջ ափին հանդիպել է
Դէվէտին, որովհետեւ այսօր առաւօտեան Կիս-
շենքեր լսել է Մէտուէնի թշուառութենքի ար-
ձակման ձայնը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, Պեյձեանի ասումը նկարա-
դրելով՝ գեներալ Չաֆֆիի ասում է, թէ ամերի-
կացիները դիրք էին զբաղեցրել յետիւ-
որանիցի ենթադրումով եւ չոմարտարար գործիչ-

բայց դեմ կազմել չափազանց վաղը դաշնակից զորքերը կանցնեն Պէյլիօյի ձախ ափը եւ կը գնան Եանդուրի վրա:

Չիֆֆօնի Յուլիսի 25-ին ուսմանը գրաւեցին Նիւ-Կասթիլի բնակիչները քաղաքամասը:

ՇԱՆՔՆԱՅԷ Յուլիսի 25-ին: Տառապարհալիք ուսուցիչի պաշարեղէնի արտահանումը որպէս զի հիւսիսային Ձինաստանի զորքերին պաշարեղէն չը հասցնէին:

Եանցէից անցնող շողեւանները հաղորդում են, թէ Նանկիւնի ժողովրդի մէջ նկատուած է եռանդուն գործունէութիւն: Կազմակերպուած են նոր բառարեղանակ, որոնք իշխող դերը ունեն գետի ստորաբաժանական կէտերի վրա: Յուլիսի 24-ին նաւատորմի օֆիցերները խորհրդում որ կայացաւ ծովագետ Սէյմուրի նաւադահուկութեամբ, որոշված է հարկաւոր դէպքում զորքեր իջեցնել ցամաք՝ եւրոպական զաւոյթները պաշտպանելու համար: Նաւատորմի օֆիցերները աւագը պէտք է անյապաղ ստանանէ այն բոլոր պահեստի զորքերի հրամանատարութիւնը, որոնք գտնուում են անգլիական հիւպատոսարանում եւ պէտք է ձախալքի իրապէս գլխաւոր հրամանատար նաւերից ցամաք հանված ծովային ուժերի եւ կամաւորներին: Այս ձեւով կազմուած զորաբանի զինուորները թիւը կը հասնի 2,400-ի, որոնց կէսը կը լինեն կամաւորներ:

ՎիէննԱ: Լրագիրները համակրանքով ողջունում են կոստա Լամպրոֆի նշանակումը արտաքին գործերի մինիստրութեան կառավարչի պաշտօնում, այդ փաստը համարելով նշան այն բանի, որ Ռուսաստանը հետեւելու է նախկին քաղաքականութեան:

ՏԵՆՆԱՅԷ: Պէյճևանի մօտ կռիւն սկսվեց այսօր արաւոսեան ՅՊՂ ժամին: Ձինացիները հալածված են ամբողջութեամբ: Դաշնակիցները մեծ կորուստներ ունեցան: Պեկինի ճանապարհը այժմ բաց է համարվում:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Այսօր տնայեց Գօտի՝ թոկերի եւ մանուածների գործարանի հարկաւորմանը զոյգութեամբ յօրակամը, առեւտրական տնները եւ բոլորային վաճառականները բազմաթիւ ներաշարժիչները ներկայութեամբ Յօրեկարը զբաւոր չորհրդարանութիւններ ստացաւ ֆինանսների մինիստրից, նրա օգնականներից՝ Կօլալեւսկուց եւ Կօլալեկից, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրից եւ շատ ուրիշ չորհրդարանական հետազոտներ:

28 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ, որով արտաքին գործերի մինիստրութեան խորհրդական իշխան Օրօնիսկուն հրամայված է լինել մինիստրի օգնական: Մովսիսեան Ալեքէիկի հետազոտները յուլիսի 23-ից եւ 22-ից, Վեր զորքերը գրաւեցին չինական Նիւ-Չանգը: Գրաւման մասնակցում էին «ՕՏՎԱՅՆԻՅ» ու «ԴՐՈՄԱՅՆԻՅ» նաւակները եւ № 206 ականակիրը: առաջինը ուղարկուած էր քաղաքը, երկրորդը՝ մարտկոցը: Կորուստ չունեցանք: Գաղաքը գրաւելուց յետոյ բնակիչները ձեռքից անուծւում են զէնքերն ու փամփուշտները եւ ներմուծվում է ուսուցիչ վարչութիւնը:

Գինեւրալ Գրոգեկօվի հետազոտները: 1) Խարբինեան զորաբանի զորքերը գրաւեցին Խարբին յուլիսի 21-ին: 2) Գինեւրալ Բեննենկամպի յուլիսի 25-ին հասաւ չինաց զորաբանին, որ ունէր 10 թնդանօթ եւ քաղկացած էր 800 հետեւակ եւ 300 հեծեալ զինուորներէից, եւ պարտութիւն պատճառեց նրան, խլելով երկու թնդանօթ: Մինչեւ Երբի գիւղը գինացին կուելով, իսկ երկուշտան ժամի 6-ին, չինացիները սկսեցին յարձակողական դիրք ընել, չըլկապատելով մեր զորաբանին երկու թեւակողմերից, բայց մեծ կորուստներով յետ մղվեցին՝ չնորէի կողակները կրկնակի յարձակումների: Բեննենկամպի օգնութեան ուղարկված է հետեւակ եւ թնդանօթաձիգ զորք: 10 ՆԴՕՆ: Բօքրտս հետազոտում է Պրետտօրիայից, թէ ինքզինքնիւ եւ Գարրիսիտի չըլանում գերի են առնված 4,140 բռնիներ, գրաւած են 4000-ից աւելի ձիեր եւ ոչնչացրած է մեծ քանակութեամբ ռազմամթերք: Երանգարիվը քաղաքապահ զորաբանին բաղկացած է 300 աւատարկայիններից եւ հարաւաֆրիկական զորքերից: Գինեւրալ Կարրինգտոն ուղարկեալ Մէտուէն Կիտչենի հետ միասին, որ գործում է Դէվէտի գէմ, երէկ կռիւ ունեցաւ Դէվէտի զորքերի մի մասի հետ Վենտերաբոօմի մօտ: Թշնամին յետ է մղված բլուրների շարքից:

ՊԱՐԻՉ: Պարիզի չինական դեսպանի միջոցով Դէվէտէ մի ծածկագիր հետազոտ ստացաւ Պիչօնից, որի մէջ սպայի է, թէ դեսպանները զուրա կը գան Պեկինից, եթէ նրանց ուղեկ-

ցելու համար կուղարկվեն օտարերկրեայ անգլան զինուորական քվար, որ կարողանան պահպանել 800 օտարերկրացիների եւ 3000 տեղային բրիտանականների չինական կցորդները լրա յոյս չը պէտք է դնել:

ԲԵՐԼԻՆ: Տակուի գերմանական նաւատորմի հրամանատարը հաղորդում է յուլիսի 24-ից, թէ դաշնակից զորքերը յուլիսի 23-ին, առաւօտեան, վերցրին չինացիների դիրքը Պէյճևանի մօտ: գերմանական զորքից մասնակցում էին երկու վաշեր, մանրամասնութիւններն յայտնի չեն եւ դեռ եւս ոչ մի տեղեկութիւն չէ ստացված դաշնակիցների կորուստի մասին: Ենթադրվում է անպապաղ դնալ Եանձուէի վրա, որպէս զի թոյլ չը արվի չինացիներին հաւաքելու այնտեղ իրանց ուժերը:

ՇԱՆՔՆԱՅԷ Յուլիսի 26-ին: Յուլիսի 26-ին այստեղ աի կիւնցնվին երեք հնդկական գնդեր պաշտպանելու համար Շանգայի զաւոյթները: Շանգայի տաօտային խոստումն է տուած, թէ զբաւումը միայն ժամանակաւոր կը լինի, քանի որ հիւսիսում կը շարունակվեն անկարգութիւնները: Տառապարհալիք յայտնեց, որ զորքերի թիւը կը սահմանափակվի անպայման անհրաժեշտութեան չափերով:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Գինեւրալ Չաֆֆի հետազոտում է, թէ Եանձուէ յուլիսի 24-ին գրաւված է ամերիկացիներից: Կորուստը հասնում է 60 մարդու:

ԲԵՐԼԻՆ: Տօկիօյից լուր է ստացված, թէ դաշնակից զորքերը յուլիսի 22-ի գիշերը առաջ խաղաղին Տեանձինից մօտ երեք մղոն դէպի հիւսիս բանակած չինացիների վրա՝ ձախատամարտը սկսվեց միւս առաւօտ եւ տեւեց մինչեւ 7 1/2 ժամը: չինացիները ջարդ կերան եւ Պէյճևանը առնվեց: Ծրագիրը կայանում էր նրանում, որ անպիտան եւ ետպնական զորքերը, թուով 12,000 հոգի, պէտք է գնային Պէյլիօյի ալ ափով, իսկ 5,000 հոգի ուսմանը եւ ֆրանսիացիները՝ ձախ ափով, սակայն վերջինները չը կարողացան առաջ գնալ, որովհետեւ չինացիները հեղեղել էին ձախ ափը: Ուստի Պէյճևանը գրաւեցին միայն անգլիացիները եւ ետպնական չինացիները: Դաշնակիցները առաջ են խաղում այժմ դէպի Եանձուէ:

Խաբազի՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՍԱՅԱ ՄԷԼԻՐ-ԱՆԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ ո յ ա տ ե ս աւ

ԱՐԴԱՐ ԾԵՐՈՒՆԻ

Վ. ՀԻԻԳՕՐԻ

Թարգմ. Ա. Միխայիլով

Գինն է 15 կոպէկ

Դիմել—Տիֆլիս, կոնտոր Общества Издания Армениянских книг (Дориемеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres arméniens. Բնկերութեան անդամ լինելու համար վճարում են տարեկան 6 ռուբլի եւ ստանում 8 ռուբլի գրքեր: Բնկերութեան գրասենեակում վաճառվում են բնկերութեան գրքերը: Յանկարգներին ձրի ուղարկվում է գրացուցակ: 1—5

Վ ա ճ ա ո վ ու մ է

ԲՃ. Ա. ԲՈՒԳԱՆԵԱՆԻ

ՄԵՐ ՆԵԱՐԴԵՐԸ

12+109=121 երես գինը 10 կոպ.

Պահեստը Տիֆլիս, Կոնտորիա Ե. Մարտի-րոսյանց: (Ե. Տ.) 1—2

Ա լ է ք ա ն դ ր ու ղ ո լ

ՍՏԵՖԱՆԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են.

Պ. Կ. Կոստանեանի բոլոր աշխատութիւնները. գրավածաւաններին . . . զեղջ 20%
Տիկին տ. Կոստանեանի բոլոր մանկական գրքերը . . . զեղջ 20%
Կրպէ, Պատկերներ կեանքից, 96 երես, գինը 20 կ. . . զեղջ 30%
Բերական կամ Այրեւնարան, աղօթքների նոր յաւելումով, 42 երես. գինը 10 կոպ. . . զեղջ 50%
100-ից աւելի գնողները 100-ին կը վճարեն 3 ռ. 50 կ.

Դիմել Ալեքսանդրօվ, Կոնտորիա Տեպանյան. 1—3 (Ե.)

Երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ

ԱՅՈՏ ԵՐԿԱՐ

պատմական վէպը (երկու մասը մի գրքի մէջ): Գինն է մէկ ռուբլի, գումարով գնողներին զիջում: Դիմել Կիւնսթուսկան գրափաշտանոցին կամ հեղինակին՝ Տիֆլիս, Դворянская улица № 6, Ваграту Айвазянцу. 2—5

Դ Պ Ր Ո Ց տիկ. Կար. Լիսիցեանցի

երկու սեռի մանուկները համար միասնեղ պարապմունք իր հարազատ երեխաների հետ: Ընդունելութիւնը՝ սահմանափակված: Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն: Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհրութեան փողոց (նախկին Սաքօվայա), սեւ. տ. № 29) (Ե.) 9—25

Վիէննայում լոյս տեսաւ «ՉԵՅՈՒՆԻ ԱՆՏԵԱԼԵՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ»

I մաս

Կիւլիկայի քարտէզով, Չէյթուէի յատակագծով, Չէյթուէի տեսարանով եւ Չէյթուէի կարծիքի պատկերով:

Գինը 1 ռ. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս. Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, իսկ արտասահմանից՝ Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII, Mechitharistengasse 4. (Ե. Տ.) 5—10



Ֆինանսների մինիստրի թոշտուքեանք ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է ապ ունկիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պարտաւոր հմուտ հաշուապահներ: Աւարտողներն ստանում են աւտոս եւ տատներ: Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուարանութիւն եւ թուարանութիւն համբիւլ վրա: 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային: 3) Առեւտրական թղթակցութիւն: 4) Առեւտրական տնտեսագիտութիւն: 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ: 6) Գեղագրութիւն եւ արաբագրութիւն (ուղղումն ձեռագրի): Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից առն օր՝ կուրսերում եւ եղը: Մովսիսեան եւ ընկ. ԲԱԳՈՒՆԻ բաժանմունքում Կուրսերի կանոնադրութիւնը (УСТАВЪ) եւ ժանրաման ծրագիրը—արվում եւ ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները զիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. Տ.) 10—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՅԻՅ ԲԱԹՈՆ Մ, չորեքշաբթի օրերը, եր շաբաթը մի անգամ:

Եւ հալառակը՝ Բաթոնից Մարսել, մանկով Տրապիգօն, Սաւսօն եւ Պօլիտ Մեկնօն Բաթոնից չորեքշաբթի, 3/15 օգոստոսի ԱՆԱՏՈՒ չորեքշաբթի, սաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ պէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից իտ Բաթոնից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ արվում են ուղղաւոր պակաս գներով:

Ամբար մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթոնի Կ. Անալիսիայի մէջ, ընդ նկով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու մար թող բարեհաճեն դիմել բնկերութեան գործախառնարներին՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԴԱՆՕԻՆ, Նարէթէմայա Թիֆլիսիում—պ. Օ. Գ. Բալկէնդանեանին, Միօնի փող. Ուղիաբարտիսովի եւ Մայստրաձէի քաղաքապար: ԲԱԳՈՒՄՈՒՄ Վ. եւ Ի. Մաթաֆեաններին, Նարէթէմայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՒՄ ՍԻՅՈՎ—Վաղիկաւազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Տ.) 13—20

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍԵՆԵՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց եւ պարտաւոր գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են աւտոս եւ տատներ: Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային), 4) Թուարանութիւն համբիւլ վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական եւ մուրհակային կանոնադրութիւն եւ 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Առումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 7-ից, ա մեկնայ օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, եւ երեկոեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօրյակով, Ալեքսանդր Փրիգօնովի տանը № 9, Սերգեյեւկայա եւ Լեւոնտովկայա փողոցների անկիւնում: Ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղը: Մովսիսեանների բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիները զիմում են՝ Տիֆլիս, Ս. Ս. Մանուշլանց (Ե. Տ.) 11—25